

ՀԱՅՈՒ ՍՈՀՅԱՆ

## ՆԱԽՐՅԱՆ ԴԱԼԱՐ ԲԱՐԴԻ

Նազում ես ու շորորում գմրովառե քո շո-  
րերում,  
Ծուր արած ճամփի վրա մանկության կա-  
նաչ արտի,  
Քո կանչը զեզում է զիլ իմ սրտի խոր ձո-  
րերում,  
Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ, Նախրյան դա-  
լար բարդի:  
Ախ, ասես խարուկ լինես բոնկված կա-  
նաչ բոցով,  
Ես հեռվից քեզ եմ գգվում կարոտով կրակ  
սրտի.  
Լցում ես դաշտերն ամեն հարազատ քո  
խշշոցով,  
Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ, Նախրյան դա-  
լար բարդի:

Իմ արտույտ-մանուկն ահա խաղում է քո  
շվարում,  
Քո փառքին երգ է շրջում շրթերով կոկոն  
վարդի,  
Զոյլ արա երա կրանքին, նոր նման գալիիր  
անքուն,  
Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ, Նախրյան դա-  
լար բարդի:  
Ես երգիչ երի, սրի, շահ չունեմ քո սիրոց  
զատ,  
Քեզ նման կանաչ կրանքով քեզ հասնար  
ելած մարտի,  
Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ  
խշաս;  
Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ, Նախրյան դա-  
լար բարդի:

1944



Գատնիի վերականգնված տաճարը. 1974 թ.